
Քաղ. օր. 1205 հոդ. 6-րդ կետը պետք է ենթարկվի փոփոխության

Այս աշխատանքում փորձ է արվում հիմնավորել, որ Քաղ. օր. 1205 հոդ. 6-րդ մասը թերի է և պետք է ենթարկվի փոփոխության, որովհետև այն չի նախատեսում նոտարի կողմից կտակարարին վերջինիս որոշ կարևոր իրավունքների պարզաբանման պահանջ, ինչպես նաև՝ այդ պարզաբանման արձանագրում:

Նոտարը, կտակը վավերացնելիս, պարտավոր է կտակարարին պարզաբանել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը (Քաղ. օր. 1205 հոդ. 6 մաս): Նորմն ամրագրում է միայն ժառանգի նկատմամբ կտակարարի ունեցած պարտավորության նոտարի կողմից կտակարարին պարզաբանելու պարտականությունը, այլ իրավունքների և պարտականությունների պարզաբանման պարտավորություն նոտարը չունի: Սակայն ուշադրության են արժանի մի շարք այլ նորմեր. մասնավորապես՝ Քաղ. օր-ի 1199-րդ հոդվածը, համաձայն որի կտակարարը կարող է կազմել կտակ ցանկացած, անգամ ապագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ, կազմել կտակ ամբողջ գույքի, դրա մի մասի կամ առանձին գույքի կամ իրավունքի վերաբերյալ: Քաղ. օր-ի 1202-րդ հոդվածի բովանդակության կարևորությունը կայանում է նրանում, որ կտակարարին իրավունք է տալիս կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը: Իսկ Քաղ. օր-ի 1203 հոդվածը վերաբերում է կտակի ձևին՝ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և վավերացվի նոտարի կողմից, հիշյալ դրույթի կանոնները չպահպանելը հանգեցնում է կտակի անվավերության: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ սովորաբար հիշյալ նորմերի պարզաբանման դեպքում կտակի վրա համապատասխան նշում է կատարվում՝ պարզաբանման փաստը արձանագրելու նպատակով, վերջինս ամրագրված է ՌԴ Քաղ. օր-ի 1125 հոդ-ի 6-րդ մասում:

Ընդհանրացնելով վերոհիշյալը՝ կարծում ենք, որ Քաղ. օր. 1205 հոդ. 6-րդ մասը թերի է և առաջարկվում է այն խմբագրել հետևյալ խմբագրությամբ. «Նոտարը, կտակը վավերացնելիս, պարտավոր է կտակարարին պարզաբանել 1194, 1199, 1202, 1203 հոդվածների բովանդակությունը և կտակի վրա կատարել համապատասխան գրառում»: Առաջարկության իմաստը կայանում է նրանում, որպեսզի կտակարարն ավելի շատ տեղեկացված լինի իր իրավունքների մասին, մասնավորապես՝ 1199-ի միջոցով՝ ժառանգվող գույքի, 1202-ի միջոցով՝ կտակը ցանկացած ժամանակ

վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու իրավունքի, և 1203-ի միջոցով՝ կտակի ձևի մասին:

Տես նաև՝ Каминская, Наталья Львовна, Правовые проблемы наследования по завещанию в российском гражданском праве

<http://armenianlegal.info>

Հեղինակ՝ Արմեն Մարտիրոսյան, իրավաբան, Հայ բաց իրավաբանական բլոգ, Հայկական գիտական համագործակցություն